ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 261-Ա

07 մայիսի 2026 թ.

ԱՆԱՀԻՏ ԿԱՍՅԱՆԻ ՀԵՏ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 05 ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 5-ի N 693 արձանագրությունը (2026 թվականի մայիսի 5-ի Ն/1450-2026)

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անահիտ Կասյանի հետ 2026 թվականի մայիսի 7-ից լուծել 2025 թվականի փետրվարի 19-ին կնքված N 05 ժամկետային աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան զբաղեցրած պաշտոնից:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շողակաթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անահիտ Կասյանի համար վերջին աշխատանքային օր համարել 2026 թվականի մայիսի 7-ը:

07.05.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840509

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ